Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՆԻ ԴԱՎԹԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԺԳ.00.01-«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաշխարհայնացման պայմաններում մարդկային ներուժի զարգացման, հասարակական գիտակցական մակարդակի բարձրացման նպատակով էակապես մեծանում է պետության վարած կրթական քաղաքականության դերը: Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը պատրաստում է մասնագետներ երկրի բոլոր բնագավառների համար, իսկ բուհերի կողմից թողարկված մասնագետների որակով էլ պայմանավորված երկրի ցանկացած բնագավառի գործունեության հաջողություններն ու երկրի զարգացումն ամբողջականության մեջ: Համաշխարհայնացման պայմաններում Հայաստանի Հանրապետության պարագայում խնդիրները բազմակողմ են և բազմաբնույթ: Մասնավորապես խնդիրներ են առկա կրթության համակարգի զարգացման, թողարկված մասնագետների միջազգային մակարդակով մրցունակության ապահովման և բարձրագույն կրթության համակարգի գրավչության մեծացման ոլորտներում: Տնտեսապես զարգացած երկրների կրթության համակարգերի ուսումնասիրությունը, դրանց կառավարման համեմատական վերլուծությունն ընդհանուր առմամբ հնարավորություն են ընձեռում բացահայտելու կրթության համակարգերի առաջանցիկ զարգացման պայմանները, գործոնները, գործունեության արդյունավետության ապահովման ուղիներն ու զարգացման միտումները: Անի Դավթի Աբրահամյանի ատենախոսության մեջ առաջին անգամ համեմատական վերլուծության են ենթարկվել Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության կառավարման համակարգերը, վեր հանվել նմանություններն ու տարբերությունները, բացահայտվել՝ ՀՀ կրթության համակարգում առկա խնդիրները: Այդ առումով էլ ներկայացված հետազոտության թեման իսկապես արդիական է և կարևոր, մեր Հանրապետությունում ընթացող կրթական բարեփոխումների գործընթացների տեսանկյունից: Ուստի և դրա առաջադրումն իբրև ատենախոսություն հիմնավոր է:

Հենց այս առումներով էլ ատենախոսության արդիականությունը հիմնավորված է: Ներածության մեջ բավականին ճշգրիտ է կատարված արդիականության հիմնավորումը, հստակ ձևակերպված են ատենախոսության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքը կազմված է 139 էջում ամփոփված՝ ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից: Գրականության ցանկում նշված է 96 աղբյուր: Օգտագործած գրականության ցանկը արտացոլում է ատենախոսության պրոբլեմատիկան:

Միանշանակ, կարելի է պնդել, որ տրամաբանական առումով աշխատանքը ճիշտ է կառուցված: Հետազոտության լեզուն և ոճը համապատասխանում են գիտական հետազոտությանն առաջադրվող հիմնական պահանջներին:

Ատենախոսության առաջին՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարումը» բաղկացած է վեց ենթագլխից, որտեղ ներկայացված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ընդհանուր բնութագիրը և կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև պետական վերահսկողությունը բարձրագույն կրթության ոլորտում: Գլխում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության արդի համակարգը, դրա կառուցվածքը, համակարգում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները, դրանց առանձնահատկություններն ըստ իրավակազմակերպական կարգավիճակների, դիտարկված են պետական կրթական քաղաքականության նպատակները, խնդիրներն ու սկզբունքները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում: Վերլուծված է ոլորտը կարգավորող օրենսդրությունը, բացահատված են օրենսդրության մեջ առկա հակասությունները և բացթողումները, քննարկված և վերլուծված են պետական ֆինանսավորման ծավալները և ուղիները: Միաժամանակ, ատենախոսն անդրադարձել է բուհերի ֆինանսական ինքնավարությանը, բուհերի կառավարման գործընթացներին, պետական կառավարման մարմինների մասնակցությանը կառավարման գործընթացներին, բուհի ներբուհական կառավարման գործունեության հիմնական ուղղություններին: Պատշաճ մակարդակով ներկայացված են ՀՀ-ում որակի ապահովման համակարգն ու որակի ապահովման գործընթացները, որոնք հետագայում համապատասխանացվեց բոլոնյան գործընթացի

պահանջներին: Հետազոտության արդյունքներով բացահայտված են նաև ՀՀ-ում հավատարմագրման գործընթացին առնչվող օրենսդրական ու ենթաօրենսդրական փաստաթղթերում առկա հակասությունները: Գլխում դիտարկված են նաև ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները:

Ատենախոսության երկրորդ՝ «Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարումը» գլուխը բաղկացած է վեց ենթագլխից: Գլխում պատկերավոր ներկայացված են Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի ընդհանուր բնութագիրն ու կառավարման առանձնահատկությունները, պետական վերահսկողությունը բարձրագույն կրթության ոլորտում, քննարկված են Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքն ու առանձնահատկությունները, բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները, դիտարկված են Անգլիայի պետական կառավարման առանձնահատկությունները (որոնք պայմանավորված են Սահմանադրական միապետություն հանգամանքով) բացահայտված են պետական կրթական քաղաքականության ու օրենսդրական դաշտի առանձնահատկությունները: Միաժամանակ, գլխում ներկայացված են Անգլիայի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման առանձնահատկությունները, բացահայտված է, որ բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը կախված է բուհերի կարգավիճակից և բուհերը ստանում են պետական ֆինանսավորում Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհրդի կողմից բարեգործությունների պարագայում: Անգլիայում գործում է պետական ուսանողական վարկերի համակարգ, ինչի արդյունքում բարձրագույն կրթությունը հասանելի է երկրի քաղաքացիներին՝ սովորողների ակադեմիական առաջադիմության դեպքում: Գլխում անհրաժեշտ մակարդակով ներկայացված են Անգլիայի բուհերի կառավարման համակարգերն ու դրանց առանձնահատկությունները, ներբուհական կառավարման համակարգը, բուհերի կառավարման մարմինների ձևավորումը, ռեկտորի ընտրությունն ու գործունեությունը: Գլխում դիտարկված են նաև կրթության համակարգի անընդհատ կատարելագործմանը նպատակաուղղված Անգլիայի բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման գործընթացները, քննարկված են բարեփոխումներն ու նորարարությունները բարձրագույն կրթության ոլորտում: Բացահայտված է, որ Անգլիայի բարձրագույն կրթության համակարգում մշակվել են

նորարարական ուղղություններ, որտեղ կարևորվում է նոր գաղափարի ստեղծումը: Ատենախոսը կարևորել է այն, որ Անգլիայում բոլոր բարեփոխումների ու նորարարությունների հիմնական նպատակը կրթության առևտրայնացումն է ու համաշխարհային բուհական դասական պարագայում առաջատար դիրքի պահպանումը:

Ատենախոսության երրորդ՝ «Բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները Հայաստանում և Անգլիայում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ հետազոտության արդյունքներով բացահայտված են Անգլիայի և ՀՀ-ի բարձրագույն կրթության համակարգերի և դրանց կառավարման նմանություններն ու տարբերությունները: Աղյուսակով ներկայացված են երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի նմանությունները, որոնք հիմնականում պայմանավորված են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին անդամակցությամբ: Արձանագրված են նմանությունները բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքի, կառավարման և կրթության բովանդակության մեջ: Բացահայտված են նաև երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները, որոնք ատենախոսը պայմանավորում է երկրների զարգացվածությամբ, պետական կառավարման համակարգերով և իրավական դաշտով: Աղյուսակով ներկայացված են նաև երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի տարբերությունները:

Երրորդ գլխում ներկայացված է կառավարման մեխանիզմի առաջարկ, որտեղ հաշվի է առնված Անգլիայի առաջավոր փորձը, տեղայնացված է, իրատեսական և իրագործելի Հայաստանի համար:

Վերոնշյալից հետևում է, որ ատենախոսը, ըստ էության, կարողացել է ըմբռնել համեմատական վերլուծության միջոցով Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի զարգացման առաջանցիկ ուղիները և դրանց բացահայտման կարևորությունը:

Ատենախոսության տասը եզրակացություններում ամփոփված են աշխատանքի արդյունքները: Ատենախոսության եզրակացությունը հավաստում է նպատակի իրականացված լինելը, դրված խնդիրների լուծված լինելը, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմագրում և հեղինակի գիտական աշխատանքներում:

Ատենախոսը հետազոտական ծրագիրն իրագործել է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսությունն աչքի է ընկնում խորը վերլուծությամբ, ձևակերպված և լուծված խնդիրներով:

Սակայն, ատենախոսությունը զերծ չէ մասնակի թերություններից և բացթողումներից՝

1) ատենախոսության մեջ տեղ են գտել որոշ անճշտություններ (աշխատանքում նշված են վերցված տվյալների հղումները), օրինակ՝ էջ 10-ում նշված է, որ ՀՀ բարձրագույն կրթության համակարգում գործում են 55 բուհեր, որոնցից 27-ը պետական բուհեր են, ՀՀ-ում գործում է 1 օտարերկրյա բուհի մասնաճյուղ: Մինչդեռ, ըստ ԿԳՄՍ պաշտոնական էջի մասնաճյուղերի թիվն ավելի մեծ է, այդ թվում՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի, Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի մասնաճյուղեր, Արևմտյան ՈՒկրաինայի ազգային համալսարանի Երևանի կրթագիտական ինստիտուտ և այլ մասնաճյուղեր:

2) էջ 10-րդ էջում գրված է. «ՈԱԱԿ-ը ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում իրականացնում է ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները: Հավատարմագրման գործընթացը իրականացվում է 2015 թվականից ...», իսկ էջ 49-ում գրված է «Եվ 2014 թվականից հետո ՀՀ բուհերը արդեն երկրորդ անգամ ստանում են իստիտուցիոնալ հավատարմագրում», որոնք հակասող տեղեկույթներ են, բացի այդ ՈԱԱԿ-ը դեռևս ծրագրային հավատարմագրում չի իրականացրել և 2015 թվականին ՀՀ-ում արդեն եղել է 30-ից ավելի մասնավոր պետականորեն հավատարմագրված բուհ: Հավանաբար ատենախոսը ցանկություն է ունեցել նշել, որ 2015 թվականից հավատարմագրման գործընթացը սկսել է կազմակերպել ՈԱԱԿ-ը:

3) առկա են տեխնիկական և համակարգչային թերություններ:

Սակայն, այդ թերություններն ու բացթողումները, չեն կարող ազդել ատենախոսության իրական գիտական արժեքի վրա:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական գիտական հետազոտությանն առաջադրվող հիմնական պահանջներին, շարադրման ոճը, լեզուն գիտական ակադեմիական տեսակետից միանգամայն ընդունելի է:

Այսպիսով, Անի Դավթի Աբրահամյանի «Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» թեմայով ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտամանկավարժական աշխատանք է: Ատենախոսությունն աչքի է ընկնում թեմայի հիմնավորվածությամբ, արդիականությամբ, հետազոտության բովանդակությամբ, դրված խնդիրների լուծման արդյունավետությամբ: Հետազոտության նորույթը կասկած չի հարուցում:

Անի Դավթի Աբրահամյանի «Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» խորագրով ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Հ.Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ Հ.Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՓԻԼԱՎՋՅԱՆ